

զիսցի Աղարեգի Վարդաղարեանց՝ վասն նուիրըլց 500 ու վանացն Աւանայ: Թ. 998.

Կոնդակ օրչնութեան յանուն ն։ Բայառ զիսցի Գեղորդայ Յուռնազեան՝ վասն նուիրելոյն վանաց 500 ու Թ. 999.

բասողների մասին ասում է. «Նրանց բերանումը ճշմարտութիւն չկայ, նրանց ներսը չարութիւնով լիքն է. Նրանց կոկորդը բաց գերեզման է և լեզուով նենգում ու կեղծաւորում են» Սաղմ. Թ. 27: «Նրա բերանը լիքն է անելքով, նենգութիւնով և բանութեամբ. Նրա լեզուի տակ չարիք և անիրաւութիւն կայ:» Սաղմ. ԾԶ. 4 Դաւիթիմը գանգատում է. «Նրջապատուած եմ առիւծներով՝ բոցաշունչներով այնպիսի մարդկանց մէջ, որոնց ատամները նիզակներ ու նետեր են և որոնց լեզուները սրած թրեր են:» Եւ դարձեալ Սաղմ. ԿԴ. 2 ելն. «Ծածկիր ինձ չարմարդկանց ընկերութիւնից, անիրաւների ամբոխից, որոնք սրում են իրենց լեզուն որպէս թուրա ձգում են իրենց դառն խօսքերը որպէս նետեր՝ անմեղին ծածուկ հարուածելու համար:» Եւ դարձեալ Սաղմ. ՃՓԹ. 2. «Տէր, փրկիր իմ անձը ստախոս շրմունքներից, կեղծ լեզուներից:» Եւ դարձեալ Սաղմ. ՃԼ.Թ. 1. ելն. «Տէր, աղասիր ինձ չարմարդկանցից, որոնք իրենց սրումը չարութիւն են հնարում, որոնք սրում են իրենց լեզուն օձի պէս. Նրանց շրմունքների վրայ իմի թոյն կայ:— Այս տեսակ խօսքերից կարելի է հասկանալ թէ բամբասանքը չարութեան ինչ սարսափելի մի արտայատութիւնն է:

Ա. Ա. Բ. Ե. Ա. Ա. Բ. զրում է դարձի եկած Յիսուսին հաւատացող մարդկանց: Իրենց անհաւատութեան ժամանակ նրանք սովորութիւն են ունեցել չարանալու, երբ մէկը նըրանց դէմ մի բան էր գործում: Այդ չարանան էլ բնական է որ արտայայտութիւն էր դաել բամբասանքի մէջ: Բայց հիմա առաքեալն ասում է. «Դէն ձգեցէք ամէն չարութիւն և անչ չարախօսութիւն:» (բամբասանք): Ա. Ձ. բամբասանք, ասում է նա: «Դրանով նա կամենում է հասկացնել, որ բամբասանքը շատ կերպերով կարող է լինել՝ երբեմն աւելի կոռպիս, երբեմն աւելի նուռը: Այսու երբեմն այնքան նուռը կարող է լինել, որ զուտ բարեպաշտական կերպարանք կատանայ: Բայց՝ դէն ձգեցէք ամէն բամբասանք, ասում է առաքեալը:

Աստուածաշունչը այս բանի մասին շատ է խօսում, և բամբասանքի յանցաւորութիւնը ներկայացնում է, ամենասարսափիլի խօսքերով և օրինակներով: Սաղմ. Ե. 9 հ.* բամ-

բասողների մասին ասում է. «Նրանց բերանումը ճշմարտութիւն չկայ, նրանց ներսը չարութիւնով լիքն է. Նրանց կոկորդը բաց գերեզման է և լեզուով նենգում ու կեղծաւորում են» Սաղմ. Թ. 27: «Նրա բերանը լիքն է անելքով, նենգութիւնով և բանութեամբ. Նրա լեզուի տակ չարիք և անիրաւութիւն կայ:» Սաղմ. ԾԶ. 4 Դաւիթիմը գանգատուած եմ առիւծներով՝ բոցաշունչներով այնպիսի մարդկանց մէջ, որոնց ատամները նիզակներ ու նետեր են և ոյզպիսով Աստուծոյ պաշտօնի մէջ է խառնուում. «Որովհետեւ մի հատ է օրէնսդիրը և դատաւորը, աւելա-

* Սաղմուսի բուերը յիշտած են գարարի համեմատ:

ցնում է առաքեալը. 12 հ.։ Բայց Աստուծոյ դասաւորական պաշտօնի մէջ խառնուիլը երբեք անպատճ չի մնայ:

Քամրասել զրացուն—նշանակում է նրա մասին վատ խօսել՝ այդ կերպով նրան ուրիշ ների մօտ ստորացնելու համար: Այս մեղքը սիրոց ծիշտ հակապատկերն է, բայց դարձեալ շատ ընդհանրացած է, և այդ մինչեւ անգամ «Աստուծոյ որդուց» մէջ: Միայն Աստուած գիտէ, թէ ինչ կերպով կարելի է այդ բանը փոխել: Կարծես շատ հաւատացեալներ այս մեղքը բանի տեղ չեն դնում: Եթէ մէկը մի ուրիշի հետ անհամաձայնութիւն է, ունենում նրա լեզուն խօսին սկսում է, շարժուել: Նա խօսին միւսի մէջ այնքան պակասութիւններ է տեսնում, որ անմիջապէս ստիպուած պէտք է խօսէ այդ մասին: Եթէ նա հանդիպում է իր մէկ բարեկամին կամ մի ընկերութեան մէջ է ընկնում, նոյն բոպէին նա պատրաստ է այդ մասին խօսք բայցիւու: Մարդ կարող է համարձակ պնդել, որ շատ ժողովների մէջ և խօսակցութեանց ժամանակ անհամեմատ աւելի ընկերի մասին վատ է խօսուում: Քան լուս: Յաճախ մարդ ծիշտ այնպէս է սկսում, որ կարծես թէ մեծ ցաւակցութիւն է զգում նրա համար.— Լավ էս և այս տիսուր լուրը, որ խօսում են: Խեղճ մարդ: Նատ մեղքս է գալիս: Աստուած օգնէ: Նրան: Այսպէս և այնպէս է արել նա: Ես յետոյ շատ չի տեսում, որ նա ընկերին կենդանոյն ուսում է: Զնայելով իրենց կեղծած բոլոր ցաւակցութեանը, այս բամրաստոներից ոչ մէկը բամրասողի մօտ չի եղել՝ նրան օգնելու և ուղղութեան ձեռք մեկնելու համար:

Կամ թէ մէկը մի ուրիշի մասին մի վատ համրաւ է լուսում: Խօսին այդ բանը պինդ բռնում է: Նրա մտքովն անգամ չի անցնում, որ դորա ձշտութիւնը կամ ստութիւնը քննէ, և իմանայ: Համբաւը վատ է, և վատութեանը մարդ շուտ է հաւատում: մասնանդ երբ վերաբերում է այնպիսի մի մարդու, որին զիմացնը շատ չի սիրում: Եւ նա ստիպուած այդ բանը մի ուրիշն սիրափ ասէ: Արդարացնել աշխատելը մի սկզբնական դաս է, որը նա վաղուց է մոռացել: Այդ լուրը սիրտի հոչակուի: Նա սկսում է՝ զուցել

լուսթեան խոսուում առնելով նրանից: որին ինըը մասողիր է յայտնել իր խմացածը: Դուք է ինքն էլ այդ բանն խմացել է միայն լուսթեան խոսուում տաղով: Եւ այսպէս բերան է անցնում: Այդ տեսակ բաներ ուրիշ ներին հաղորդելու մէջ մի հաճոյք կայ: Երբ զործը վերջապէս պարզուի գուցել կերեայ, որ լուրբոլորովին սուտ եր կամ վերին աստիճանի չափազանցրած և կերպարանափոխած: Եւ այդ կերպով մարդ սատանային տեղիք է տալիս անդամութիւնի վեսաներ առաջացնելու: Այս եղանակով, եթէ զու զեռ ևս սիրտ ունիս Յիսուսի համար և նրանց համար որոնց փրկութեան ինպատճ նա մահ յանձն տուաւ, եթէ զու զեռ ևս կամենում ես Աստուծոյ զատակ միալ, եթէ զու զեռ ևս այնքան արթուն խղճմանը ունիս, որ կարող ես Աստուծոյ դատասատանցը վախինալ, ապա ուրեմն դէն ձզիր ամէն այս տեսակ բամրաստնք: Աիրաքն առում է: «Եթէ զու մի ուրիշի մասին մի վատ բան ևս լուսում զու էլ ետքիցը մի՛ կըրկնիր, և զրանով զու ոչինչ չես կորցնիլ: Այդ մասին մի՛ խօսիր ոչ բարեկամիգ, ոչ թշնամուդ հետ, և մի՛ յայտնիր այն ինչ որ զու բարի խղճմանըքով լուսութեան կարող ես տալ: Եթէ զու մի խօսք ես լսել թող այն քեզ հետ մեռնի: Անհոգ եզիր, զրանով զու չես պայթիլ» (Ոիթ. Ֆթ. 7—10). Ինքդ լոիր, և այն ժամանակ քեզ հարկաւոր չի մինիլ ուրիշներից լուսութեան խօսուում տանել:

Այս մասին Յակովոսն ասում է: «Տես զի ձիոց սանձն ի բերան գնենք առ անսալը նոցամեզ և զամենայն մարմինն նոցա նուածեմք: Ահաւասիկ և նաւոք որպիսի ինչ են, և ի սատափկ հողմոց վարեն. և փոքր թեսովի շրջին յոր կայ և միաք ուղղզնին կամիցին: Այնապէս և լեզու փոքր ինչ անդամ է, և մեծամեծս բարբառի. աշա և սակառ ինչ հուր զորպիսի անտառս հրդեհ: Եւ լեզու հուր՝ զարդ անիւրաւութեան. լեզու հաստատեալ է յանդամն մեր, որ զամենայն մարմինն ապականէ, և վառէ հրով զանիս ծննդեանն և բոլորքեալ տուչըրի ի զեհենի: Ամենայն բնութիւն զազանց և թունոց և սողնոց և որ ի ծովու են հնազանդեալ է և հնազանդի մարդկեղին բընութեան: Բայց զիեզու մարդկան ոչ ոք կարէ

Հասղանդելու զշարն և զանկարգ և զի թունքը մահաբերին։ Նովաւ օրհնեմք զծերն և զշայր և նովաւ անիծանեմք զմարդիկ օր ըստ նախութեան Աստուծոյ արարան։ Ի նմին բերանոյ երանեն օրհնութիւն և անէծք։ (Յակ. Գ. 3—10)։ Աստուած օդնէ մեղանից իւրաքանչւրին որ այս սարսափելի նկարագրութիւնը չյարմարի մեր լեզուին։ Դուցէ քո լեզուգ էլ է գժոխքիցը վառուած, թէ և զումնում և կարծում ես, թէ Աստուծոյ զաւակն ես։ «Եթէ մէկը կարծում է, որ ինքն Աստուծոյ է ծառայում բայց իր լեզուն չի սանձարում, այլ իր սիրալ խարում է, նրա աստուածապաշտութիւնը զուր է» (Կոյնը. Ա. 26)։ Բոլորովին արժան չէ, որ այս պիսի մէկը պարծենայ իր՝ Աստուծոյ զաւակ լինելովը կամ թողնէ, որ իր մասին այդ զավակը ունենան։ «Քանի ի յաւելուածոյ սրտի խօսի բերան» (Մատթ. Ժ. 34)։ Եւ եթէ լեզուն վասուած է գժոխքից, ուրեմն սրտի մէջ իշխողը չարն է, և այդ էլ չնայեած նրա աւետարանական ամբողջ զաւանութեանը, չնայելով բոլոր երգերին աստուածապաշտան զործերին և աստուածապաշտական մերին։ Այդքան սարսափելի լուրջ ինդիր է դա։

Եթէ զու ճանապարհով գնալիս մի աւեծ կամ մի որ և է ուրիշ վանդաւոր զազն տեսնես, կը սարսափես և իսկոյն կը վախչիս։ Եղբայրս, էլ աւելի փախիր բամբասանքից։ Ոչ մի օձ, ոչ մի պատառող գաղան քեզ պիկան անպատմելի մեծ վիաս հասցնել չի կարող, որքան բամբասանքը։ Մի անգամ մի մեծ և փառաշեղ շոգենաւ շատ ճանապարհորդներ վերցնելով ճանապարհորդեց զիւկի Ամերիկա։ Այդ նաւով ուղարկուած բեռների մէջ կար նաև մի արկղ, որի մէջ գտնուում էր մի այսպէս կոչուած, գժոխային մէքենայ։ Դա մի մեքենայ էր, լիքը ամենազօրաւոր պայթուցիկ նիւթերով և մի կարդ ճախարակներով այնպէս շինուած, որ մի որոշ ժամանակից յետոյ պիտի պայթէր և ամրող նաւը ոչը թուցնէր։ Բայց ոչ ոք այդ բանը չէր իւմնում։ Արկղը ընդունուեցաւ, և չար ուղարկողը փարձքը կանխիկ վճարեց։ Եւ այսպէս նաւը ճախարակը ընկաւ երդով և երածը-

առութիւնով՝ ամենագեղեցիկ եղանակին։ Բայց շուասվ ուրախութիւնը սարսափի փոխուեցաւ։ Մովի միջում գժոխային մեքենան պայթեց, նաւը մանր կտորների վշրուեցաւ, նաւի վրայ եղող զրեթէ բոլոր մարդիկը պայթիցը ջարդուեցան կամ ջուրն լնիան, որտեղ և խեղզուեցան։ Միայն երկու հոգի աղատուեցան, որպէս զի կենդանի եղողների համար պատմեն մենողների նեղութիւններն ու յուսահատութիւնը։ Այդ պատմութիւնն ընդհանուր սարսափ առաջ բերաւ։ Բայց ոչ, ինչ փոքր բան է, զա համեմատելով այն գժոխային մեքենայի հետ, որ կոչուում է բաւետառուն և որը վշրում և ամայացնում է ամենածաղկած համայնքները և նրանց անդամների սրտերի մէջ թափում է ատելութեան թոյն՝ հետո իրենց յաւիտենական կորստեանը մատնելու համար։

Հազիւ թէ զանուի մի ուրիշ բան, որ աւելի վեաներ լինի տալիս, քան չարամիտ բամբասանքը։ Եթէ մէկը միւսից մի տասը ըուրիշ գողանար, զա մի աննշան բան կը լինէր՝ համեմատելով այն վեասի հետ, որ մէկը պատմառում է միւսին՝ բամբասանքի միջոցով զրկելով նրան իր բարի տնունից և համբաւից։ Բամբասանքի միջոցով խզում է Աստուծոյ որգուց մէջ եղած սիրոյ կապը և թշնամութիւն, կախ ու վիճ է սերմանուում։ Բամբասանքի միջոցով մարդ հանդցնում է թէ իր մէջ և թէ ուրիշների մէջ եղած հոգին։ Բամբասանքի միջոցով մարդ դառնայնում է է ընկերի կեանքը. բամբասանքի միջոցով մարդ արգելք է լինում նրա իր կոչման մէջ առաջ գնալուն և այս կերպով զրկում է նրան իր ստացուածքից այս, գուցէ և իր գժուարագիւտ ապրուսից։ Այս, ինչ սարսափելի նիւթեկան վեաս կարող է մարդ հասցնել մի վաճառականին, մի արհեստաւորի կամ մի ուրիշ որեւէ, գործ ունեցող մարդու՝ բամբասանքի միջոցով։ Բայց գարձեալ—այս բանը մարդկանց մէջ ո՞քան տարբեր կերպով է դատուում։ Եթէ հաւատացեալ համարուող մի մարդու վրայ հաստատուի, որ նա 10 բուրլի է գողացիլ իսկոյն կասեն. ևսա միայն կեղծաւոր էր։ Եթէ, նա քրիստոնեայ եկեղեցու անդամ լինի, իսկոյն նրան անդամութիւնից կը հանին։

Բայց բամբասողներին թողնում են մնալ ոչ միայն որպէս եկեղեցու անդամ և հաւատացեալ, այլ մինչև անդամ որպէս հռվիւ և եկեղեցու տեսուում։ Եւ այս բանն Աստուած տեսնում է։ Բայց նրա զատասատանը պիտի գայ։ Եւ այն ժամանակ պիտի երևայ որ հաւատաքը առանց սիրոյ արժեք չունի։

Բայց գու կարող ես առարկել։ «Եթէ լուրը ծշմարիտ է, ապա ուրեմն ես այդ բանը տարածելով՝ հօ միայն ծշմարտութիւն եմ խօսում, և զա չի կարող մեղք լինել։ Կամ միթէ ծշմարտութիւն խօսելը մեղք է։» Պատասխան։ կան հանգամանքներ, երբ հաւատացեալը ստիպուած է Տիրոջ համար իր ընկերի մասին չար խօսել։ Օրինակ՝ եթէ նա կանչուած է ծշմարտութիւնը յայտնելով դատաւորի առջև՝ վիայութիւն տալու, այն ժամանակ նա պիտի խօսե, ինչ որ ծշմարիտ է իմանում, եթէ զա չարիք էլ լինի։ Յետոյ՝ եթէ մի չար բան է պատահել և նա գիտէ, թէ ով է արել բայց տեսնում է, որ այդ բանի կասկածը մի ուրիշի վրայ է ընկնում, այն ժամանակ դէպի այն անմեղը եղած սէրը պահանջում է, որ նա յայտնէ, թէ ով է իսկական յանցաւորը։ Յետոյ՝ եթէ նա տեսնում է թէ մի մարդ որին ինքը մի չարագործ է ձանաշում, աշխատում է մի ուրիշին հրապուրել իր թակարդների մէջ, ապա յանուն սիրոյ պիտի զբոշացնէ այն երկրորդին։ Այսպիսի գէպէրում մարդ պարտաւոր է և խզնով սահմանած՝ ըլուել ուրիշինկատմամբ իր իմացած վատ բաների մասին։ Բայց ասան, եղբայրա, արդեօք զա է, որ սախում է քեզ քո ընկերների մասին վատ խօսել։ Ո՞չ, թող սատանան քեզ չխարէ, այլ Աստուծոյ առջև ուղղամիտ եղիք։ Որ քո ընկերի մասին քո խօսած վատ բանը ծշմարտութիւն է, զա քո սեպհական արածի բնաւորութիւնը չի լաւացնում։ Երբ գու այդ բանն անում ես միայն բամբասանքի սիրուց ստիպուած կամ քո ընկերի բարի անունը կոտրելու և նրան ուրիշների աշքում սատրացնելու համար, այն ժամանակ գու մեղք ես դործում։ Եւ մեղքի վարձը մահն է, եթէ գու չափաշխարես։ Եղբայրա, այս բանի հետ գու մի խաղար։ Եթէ վատութեան մասին հարկաւոր ես համարում

խօսել միայն այն պատճառով, որ գու դրա ծշմարիտ մինելը զիտես, ապա նաև և առաջ խօսիր այն բոլոր վարութիւնների հասն, որ հինգ ու հինգ տարեաւում ես։ Կամ թէ հոգ տար, որ մի ուրիշն այդ մասին խօսե։ Խակ յետոյ կանգ տա,։

Մի քարոզիչ տառւմ է, «Եթէ գու մի առևնես և այնանեղ մի անպատճառ վարմունք տեսնես, ապա ծածկիր զուռուր, որպէս զի ուրիշ ու ոչ մարդ նոյն բանը չափանիւն եմ։» Այս կերպ վարութիւր քրիստոնէարքը գործել է։ Բամբասական ընդհափառակն սատանայական մի գործ է։ Պէտք է նկատել նաև այն, որ յունարէն բնիքութեանը բառը որ մեր լեզուում սատանայ բառովն է թարգմանուած, իսկապէս նշանակում է բամբասող չարախօս։ Ուրիշմն նրան ես հետեւում գու, նրա կամքն ես կատարում, նրա ծրագիրներն ես առաջ տանում, նրա զատասատանին ես և նկմթարկուում երբ բամբասում ես։ Այս մասին խորհնչել ես։

Արեգակն ի վերայ բարկութեան ձերց մի մատէ, ասում է Պօղոս առաքեալը Եփ. Դ. 26։ Եթէ դու բարկացել ես, զբանով արգելն մի մեղք ես գործել։ Զգուշացիք, որ զա առաջ չգնայ և բամբասանքի չփոխուի։ Եթէ մի աեղ հրցեհ է ծագում, աշխատում են խիզոյն հանդցէել այն, որ չտարածուի Բայց ով թողնում է, որ իր ներքին բարկութիւնը բամբասանքի փոխուի, նա նման է այնպիսի մի մորդու, որ իր տանը հրդեհ ծագած ժամանակ կրակի մէջ ամեն աեսակ այրուող նիւթեր է ածում, որ ել աւելի ճարտկ ունենայ։ Զգուշացիք այդ բանից եղբայրս։ Խողիը քո տան մասին է, քո սեփական յախտենական երջանկութեան մասին։ Ուրիշմն եթէ գու բարկանալով մեղանչել ես, աշխատիք որ մ. դ. քից յետ կանգնես և մեղաց թողութեան և մաքրուելու համար շնորհք խնդրիք։ Նախկին յոյն պիւթագորների մասին պատմում են, որ եթէ նրանք բարկութիւնից զբգուած միմեանց նախատելու եին հրապուրուում, չեին թողնում, որ արեգակը զբայց վրայ սայր մանէ, այլ մինչև այն միմեանց ձեռք եին մեկնում և միմեանց զբը կում և հաշտուում։ Եւ նրանք հիմնուներ էին։ Բայց զու, որ քրիստոնէայ իս կոչուում և ասում ես, որ Աստուծոյ Հոգին ունիա

ինչպէս ևս անում դու; Աստուած է հարշցնողը; Դու կը պատասխանին ես, և յու ևս սարսափելի յանցաւոր եմ; Ի՞նչ անեմ: Գարձիք առ Տէր Յիսուս: Նա է Փրկիչը, նրա արիւնը մաքում է ամէն մեզից: Նրան զիմիք: Նա կօգնէ և կը մաքրէ և կը փրկէ և կը նորոգէ քեզ իր նմանութեան համեմատ: Միայն Նա է կարող այդ բանն անել: Եւ իր մօտ եկողին Նա դուրս չի ձգում:

Առաքեալը Եփեսոսի հաւատացեալներին ամէն դառնութիւն և բարիութիւն և աղտակ և հայհոյութիւն մի կողմ ձգել յորդորելուց յիտոյ՝ աւելացնում է. • Նէրու- ընդ մէանուացնուածու, գնածու, ընդհել մէանու, սրբէն և Առաքեալը Քըհասոսի ընդհետաց մու (Եփ. Դ. 32): Այսպէս է զուա քըհասոնէութեան էութիւնը: Բարիութիւնը եղիր զէպի քո ընկերը, եթէ դու նրան մեղանչելիս էլ տեսնես, ոյո՞ւ եթէ մինչև անզամ մեղանչէ ուն դէմ: Եթէ դու սըրտիդ մէջ զէպի նա բարի ես, ապա րերանով ընել չես կարող որովհետեւ սրտի լիութիւնիցն է, որ բերանը խօսում է: Գնած եղիր զէպի քո ընկերը, երբ նա մեղանչում է: Յիշիր, որ նրան կարեւունիւն է հարկաւոր և օգնութիւն, քանի որ նա կորստեան ճանապարհի վրայ է: Աղատիք մեռնողներին, օդանիր թշուառներին, —սա է, սիրոյ նշանաբանը: Այս տեսակ սիրով մարդ իր շուրջն ամէն կերպ օրհնութիւններ է սփուռմ, այս տեսակ սիրով մարդ խաղաղութիւն է ձգում, և երանելի են խաղաղաբարները, զի նորա որդիք Աստուծոյ կոչեսցին: (Մատթ. Ե. 9). այս տեսակ սիրով մարդ Աստուծոյ և Յիսուսին վասաւառում է, այս տեսակ սիրոյ վրայ հանգչում է Աստուծոյ համութիւնը, որից հաւատացեալն ինքը պիտի հնձէ առատ վարձ և անպատճիլ օրհնութիւններ:

Ով Յիսուս, լըրու մեղ Քո սիրով՝ Քո սուրբ Հոգու միջոցով, ամէն:

Թարգ. Ա.



ԼՍԵՑԷՔ: Թէ ԲՆԱԳԻԾՆ ԻՆՉ Է ԱԾՈՒՄ

(Խորհրդածորինի Դ. Բումանէսի — կրօնի մասին):

•••••

Մերոնք շատ են խօսում կրօնի մասին վայր և վերոյ, երբ թէ ընագիտական տեսակէտից, բայց էլ չեն հարցնում, թէ իսկական ընագիտները լնչագէտ են նայում այդ կնդրի վերայ: Յայտնի է, որ յիսունական և վաթսունական թուական-ներում եշնում էր թունդ նիթթապաշտական հոսանք, որ ֆողտի և Մոլեշոտի պէս ծայրացեղների ջանքերով էր սկսուել: Խոկ աւելի անուանի ընագիտները այն հոսանքի մէջ չմտան, գրեթէ ամէնքը կրօնի և քրիստոնէութեան հարազատ զաւակ գոլով: Բայց երբ որ եօթանասուն թուականներում Վարութինի վարդապետութիւնն աւելի և աւելի տարածուեցաւ և Նէկէլը քարուցում էր եւը մընկըմուսու-ը (Նիւթի և ոգւոյ միաւորութիւն, մենատարբութիւն), նախկին վերաբերմունքն այնպէս փոխուեցաւ, որ ընագիտների նորագոյն ժամանակների դիրքն առ կրօնը առ նուազը պիտի կոչենք չեղողութիւն կամ անտարքերութիւն: Այդպիսի մարդիկ ընագիտութիւնն ու մակածական (ինդուկտիվ) մեթոդը այն աստիճան կենտրոն են դարձրել իրանց մտածողութեան մէջ, որ մարդկային կենաց միւս բաժինները անհոգ և անփոյթ պիտի թողնէն:

Եթէ այդպիսի ընախոյզներց հարցնենց իւրանց կրօնական տեսակէտը, նոքա իրանց կը կոչեն ևլգնոսափիկեան, որով հասկացնում են, թէ իրանք ոյին լիքին կրօնական կնդրեներց կամ առհասարակ ընագիտութեան շրջանին չպատկանող հարցասկրութիւններց: Խոկ ոմանք նաև կաւելացնեն, թէ ընական պատճառականութիւնց դուքս՝ անկարեի է բան գիտենալ: Մի 10—20 տարի առաջ ընագիտներց շատերը այդպէս էլն մտածում, եթէ ուղղակի թշնամի ևս չէին հանգիսանում հաւատայ դէմ: Այս երևոյթը բացարձում է առ հասարակ ընագիտութեան և մասնաւորապէս գարուինականութեան հզօրագոյն զարգացմանը: Յիշեալ ընագիտներց շատերի աշջում ընագիտութեան արգիւնքը այն աստիճան անձեռնմխելի նշմարտութիւն էր թուում, որ հաւատում էլն, թէ մօտ է ժամանակը, երբ ամենայն կեանքն ու մեղ շրջապատղ ըոլոր խորհուրդները՝ կատարելապէս պարզ, պայծառ և յայտնի պիտի զառնան ընախուղին: Այս ուղղութեամբ շատ հեշտ կերպով չափազանցութեան պիտի հասցնէլն ընագիտութեան մեթոդի արժէքը: Եւ իրօք շատերի աշխում այդ էր միակ ճանապարհ՝ նշմարտութիւնը ճանաչելու համար: